



DOI: 10.59560/18291155-2025.1-82

ՄԱՐՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի
մոնիթորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաժոր» համալսարանի
իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ

Ամփոփագիր

Անդրադարձ կատարելով ժամանակակից հայկական պառլամենտարիզմի կազմավորման և զարգացման փուլերին՝ հոդվածի հեղինակը գտնում է, որ Հայաստանում պառլամենտարիզմի կայացումն սկսվել է Անկախության մասին 1990 թ. օգոստոսի 23-ի Հռչակագրի ընդունումով:

Ըստ այդմ, հեղինակն առանձնացրել է ժամանակակից հայկական պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման երեք հիմնական փուլ: **Առաջինը՝** Հայաստանում պառլամենտարիզմի ձևավորման փուլն է, որն ընդգրկում է 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1995 թ. հուլիսի 5-ը ընկած ժամանակաշրջանը: Այս փուլը, ըստ հեղինակի, սկսվում է Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումով և ավարտվում Հայաստանի Սահմանադրության ընդունմամբ:

Հայաստանում պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման **երկրորդ** փուլն ընդգրկում է Սահմանադրության ընդունումից մինչև նրանում փոփոխություններ կատարելու ժամանակաշրջանը, այսինքն՝ 1995 թվականի հուլիսի 5-ից մինչև 2005 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակաշրջանը: Այս փուլը, ըստ հոդվածի հեղինակի, կարելի է անվանել Հայաստանում պառլամենտարիզմի հաստատման ժամանակաշրջան:

Հայաստանում պառլամենտարիզմի ձևավորման և զարգացման **երրորդ** փուլն ընդգրկում է սահմանադրական փոփոխություններից մինչև նոր խմբագրությամբ ընդունված Սահմանադրության ժամանակաշրջանը, այսինքն՝ 2005 թվականից մինչև 2015 թվականն ընկած ժամանակաշրջանը: Այս փուլը,

ըստ հողվածի հեղինակի, կարելի է անվանել Հայաստանում պառլամենտարիզմի հետագա զարգացման ժամանակաշրջան:

Հիմնաբառեր. Հռչակագիր, Սահմանադրություն, Գերագույն խորհուրդ, ՀՀ նախագահ, Սահմանադրական դատարան, պառլամենտարիզմ, օրենսդիր, գործադիր, դատական, պետական կառավարման խորհրդարանական ձև, իրավունքի գերակայություն, ներկայացուցչական մարմին, քաղաքական ճգնաժամ:

Նկատի ունենալով, որ պառլամենտարիզմը մենք համարում ենք ոչ միայն պետական իշխանության կազմակերպման, այլև գործառնման ձև, Հայաստանում պառլամենտարիզմի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է քննարկել ինչպես Հայաստանի պետական իշխանության կազմակերպման ձևը, այնպես էլ նրա գործառնությունը: Պառլամենտարիզմը որպես պետական իշխանության ձև արտահայտվում է երկրի Սահմանադրությունում և օրենքներում, իսկ գործառնությունը՝ հասարակական-քաղաքական կոնկրետ իրադարձություններում: Դա նշանակում է, որ Հայաստանում պառլամենտարիզմի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես այդ երևույթի սահմանադրական օրենսդրական հիմքերը, այնպես էլ նշված հիմքերի մարմնացումը կոնկրետ հասարակական-քաղաքական հարաբերություններում:

Ինչպես նշվեց, Հայաստանում պառլամենտարիզմի ձևավորման փուլն սկսվեց Հայաստանի անկախության մասին Հռչակագրի ընդունումով: Ինչպես նշված է Հռչակագրի նախաբանում՝ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման վրա, զարգացնելով Հայաստանի առաջին հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը, հռչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը:

Հռչակագրով ամրագրվեց, որ Հայկական ԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրճատ՝ Հայաստան, որն ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը: Հայաստանը հռչակվում էր ինքնիշխան պետություն, որն օժտված է պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ: Հռչակագրով ամրագրվեց, որ հայոց պետականության կրողը Հայաստանի ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է

անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Հայաստանի Սահմանադրության և օրենքների հիման վրա, իսկ հանրապետության անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Գերագույն խորհրդին: Հռչակագրով ամրագրվեց նաև, որ իր անվտանգությունը և սահմանների անձեռնմխելիությունը ապահովելու նպատակով Հայաստանը ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինված ուժեր, ներքին զորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հռչակվեց, որ Հայաստանի ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները նրա ժողովրդի սեփականությունն են: Հռչակվեց նաև, որ Հայաստանը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսավարման սուբյեկտները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայություններ: Հռչակագրի կարևոր դրույթներից էր այն, որ Հայաստանն իր տարածքում ապահովում է խոսքի, մամուլի, խղճի ազատություն, օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների իրավահավասարություն, իրավապահ մարմինների և զինված ուժերի ապաքաղաքականացում:

Նկատի ունենալով, որ ՀԽՍՀ Սահմանադրությունը դեռ գործում էր, իսկ այդ Սահմանադրության համաձայն Հայաստանի Գերագույն խորհուրդն էր ձևավորում իրեն ենթակա և հաշվետու կառավարություն, Հայաստանի ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում էր բացառապես Գերագույն խորհրդին, որին ենթակա էին նաև զինված ուժերը, ներքին զորքերը, պետական և հասարակական անվտանգության մարմինները, կարելի է ասել, որ **Հռչակագրով Հայաստանում հաստատվեց պետական կառավարման խորհրդարանական ձև:**

Այնուհետև, Հայաստանի անկախության Հռչակագրի հիման վրա ընդունվեցին մի շարք օրենքներ, որոնք արձանագրում էին երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական տեղաշարժերը:

Երկրում պառլամենտարիզմի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ 1991 թվականի փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը: Այս օրենքով Հայաստանում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ, որը պառլամենտարիզմի կարևորագույն տարրերից մեկն է: Օրենքը հնարավորություն ստեղծեց Հայաստանում արդեն իսկ ձևավորված կուսակցությունների զարգացման, նոր կուսակցությունների և քաղաքական միավորումների կազմավորման, ինչպես նաև հայ ազգային ավանդական կուսակցությունների՝ ՀՅ Դաշնակցության, Ռամկավար-ազատական և Հնչակյան կուսակցությունների կողմից Մայր հայրենիքում կրկին գործունեություն ծավալելու համար:

1991 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք՝ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին»: Այս օրենքով, ըստ էության, պետք է փոխվեր Հայաստանի պետական կառավարման ձևը՝ Հայաստանը խորհրդարանական հանրապետությունից պետք է վերածվեր նախագահական հանրապետության: Սահմանվեց, որ Հայաստանի նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը (հոդված 1): Սահմանվեց նաև, որ Հայաստանի նախագահն ընտրվում է հանրապետության քաղաքացիների կողմից՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, հինգ տարի ժամկետով (հոդված 1): Օրենքն ամրագրում էր Հայաստանի Հանրապետության նախագահի՝ բավական ընդարձակ լիազորությունները: Մասնավորապես, օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախագահը ներկայացնում է Հայաստանը երկրի ներսում և միջազգային հարաբերություններում, ունի օրենսդրական նախաձեռնության իրավունք, երկշաքայա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքները և այդ ժամկետում կարող է չստորագրել օրինագիծն ու իր առարկություններով հանդերձ վերադարձնել Գերագույն խորհուրդ՝ կրկնակի քննարկման և քվեարկության համար, կարող է հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նիստ կամ նստաշրջան, նշանակում և ազատում է կառավարության նախագահին, նրա համաձայնությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին, ընդունում է կառավարության հրաժարականը՝ այդ մասին եռօրյա ժամկետում իրազեկ պահելով Գերագույն խորհրդին, ղեկավարում է կառավարության գործունեությունը, կարող է նախագահել կառավարության նիստերին, Գերագույն խորհրդին թեկնածուներ է ներկայացնում Սահմանադրական դատարանի, Գերագույն դատարանի նախագահի, նրա տեղակալների, Գերագույն դատարանի անդամների, գլխավոր պետական արբիտրի պաշտոններում ընտրվելու և երկրի գլխավոր դատախազի պաշտոններում նշանակվելու համար: Բացի այդ, համաձայն օրենքի՝ Հանրապետության նախագահն իրականացնում է արտաքին հարաբերությունների ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, հանդիսանում է զինված ուժերի գլխավոր հրամանատարը, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, հայտարարում է ռազմական կամ արտակարգ դրություն (հոդված 8): Հայաստանի Հանրապետության նախագահն օրենքով օժտված էր նաև այլ լիազորություններով:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց անկախության հանրաքվե, և բնակչության ճնշող մեծամասնությունը (94,39 տոկոս) «Այո» ասաց անկախությանը: **1991 թվականի սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն:**

Հայաստանում պառլամենտարիզմի ձևավորման համար կարևոր նշանակություն ունեցավ 1991 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը: Այս օրենքն անդրադառնում էր Հայաստանի հասարակական-քաղաքական և պետական կյանքի կարևոր հարցերին: Օրենքն ամրագրեց, որ Հայաստանի Հանրապետությունը անկախ ժողովրդավարական պետություն է: Ամրագրեց նաև, որ Հայաստանում պետական իշխանության կրողը ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն՝ հանրաքվեներով և ներկայացուցչական մարմինների միջոցով: Սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը, ընդ որում, օրենսդիր իշխանությունն իրականացնում է Հայաստանի Գերագույն խորհուրդը: Հատուկ հոդվածով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն պաշտոնատար անձը հանրապետության նախագահն է, ով գլխավորում է գործադիր իշխանությունը և Հայաստանը ներկայացնում է երկրի ներսում և միջազգային հարաբերություններում:

Անկախ պետականության հիմնադրույթներն ամրագրում էին, որ Հայաստանի Հանրապետությունում օրենքով ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը և սեփականության բոլոր ձևերի իրավահավասարությունը: Հիմնադրույթներն ամրագրում էին նաև, որ Հայաստանի Հանրապետությունը, ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի նորմերից, ապահովում է իր քաղաքացիների ազատ և իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և դավանանքից: **Սա, ըստ էության, Հայաստանում իրավունքի գերակայության հաստատման առաջին քայլն էր, քանի որ իրավունքը ներառում է ամենից առաջ մարդու իրավունքները, և ցանկացած օրենք չպետք է հակասի մարդու իրավունքներին:**

Հայաստանի հետագա ժողովրդավարական զարգացման համար կարևոր նշանակություն ունեցրեց հիմնադրույթների այն կետը, որը, ըստ էության, դադարեցնում էր ՀԽՍՀ 1978 թվականի Սահմանադրության գործողությունը: Հիմնադրույթները սահմանում էին, որ մինչև Հայաստանի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը գործող Սահմանադրությունն ու օրենքները գործում են այնքանով, որքանով դրանք չեն հակասում հիմնադրույթներին և «Հայաստանի անկախության մասին» Հռչակագրի հիման վրա ընդունված օրենսդրական ակտերին:

1991 թվականի դեկտեմբերի 8-ին ԽՍՀՄ-ը դադարեց գոյություն ունենալուց, և Հայաստանը վերջնականապես դարձավ անկախ պետություն:

Հայաստանի Գերագույն խորհուրդը 1995 թվականի մարտի 27-ին ընդունեց Հայաստանի օրենսդիր մարմնի կազմակերպման և կառուցվածքի վերաբերյալ սահմանադրական օրենք, այնուհետև՝ 1995 թվականի ապրիլի 4-ին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին օրենք: Նշված օրենքներով, փաստորեն, ամբողջանում էին Հայաստանի Հանրապետությունում պառլամենտարիզմի հաստատման համար անհրաժեշտ բոլոր պայմանները: Մշակվել և պատրաստվել էր նաև Հայաստանի նոր Սահմանադրության նախագիծը: 1995 թվականի հուլիսի 5-ին տեղի ունեցավ հանրաքվե, որն ընդունեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Այդ Սահմանադրությունը, իր բոլոր թերություններով հանդերձ, կարևոր քայլ էր Հայաստանում պառլամենտարիզմի հաստատման ճանապարհին:

Սահմանադրությամբ Հայաստանը հռչակվում էր ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն (հոդված 1), որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (հոդված 2): Սահմանադրությունն ամրագրում էր նաև պառլամենտարիզմի հաստատման համար կարևոր այնպիսի մի դրույթ, ինչպիսին է բոլոր տեսակի ընտրությունների և հանրաքվեների անցկացումը ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (հոդված 3):

Սահմանադրությունն ամրագրում էր պառլամենտարիզմի այնպիսի մի կարևոր տարր, ինչպիսին իշխանությունների բաժանումն է: Նշվում էր, որ Հայաստանում պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա (հոդված 5):

Սահմանադրության համաձայն՝ Հայաստանում երաշխավորվում էր օրենքի գերակայությունը (հոդված 6): Հատկանշական է, որ Սահմանադրությունն ամրագրում էր ոչ թե իրավունքի, այլ օրենքի գերակայություն: **Եթե նկատի ունենանք, որ իրավունքը, սովորաբար, նույնացվում է մարդու իրավունքների և ազատությունների հետ, իսկ օրենքը կարող է հակասել իրավունքին, ապա ակնհայտ է, որ պառլամենտարիզմի կարևոր տարրերից մեկը՝ իրավունքի գերակայությունը, ըստ էության, Սահմանադրությամբ խեղաթյուրվում էր:** Այս բացը մասամբ լրացվում էր սահմանադրական այլ նորմով, ըստ որի՝ պետությունն ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա (հոդված 4):

Սահմանադրությունն ամրագրում էր պառլամենտարիզմի մեկ ուրիշ կարևոր տարր՝ Հայաստանում ճանաչվում էր բազմակուսակցությունը: Նշվում էր, որ կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանը և արտահայտմանը, ընդ որում, նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ կառուցվածքը և գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին (հոդված 7):

Հայաստանում պառլամենտարիզմի օրենսդրական հիմքերը բնութագրելու համար անհրաժեշտ է ամենից առաջ անդրադառնալ երկրի ներկայացուցչական և բարձրագույն օրենսդիր մարմնի կազմավորման, կարգավիճակի, լիազորությունների շրջանակին: Անհրաժեշտ է քննարկել նաև գործադիր և դատական իշխանության կազմավորման, կարգավիճակի և իրավասության հարցերը, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների փոխհարաբերության սկզբունքները:

Ինչպես նշվել է, տվյալ երկրում ներկայացուցչական և օրենսդիր հաստատության՝ խորհրդարանի առկայությունը և քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ ազատ ընտրությունների միջոցով նրա ձևավորումը պառլամենտարիզմի կարևոր և պարտադիր տարրերից մեկն է: Հայաստանի Սահմանադրության համաձայն՝ այդպիսի հաստատությունն էր Ազգային ժողովը, որն ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ ընտրվում էր չորս տարի ժամկետով: **Այն, որ Հայաստանի Ազգային ժողովը ներկայացուցչական մարմին էր, հատուկ ամրագրված չէր Սահմանադրությամբ:** Սակայն, Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը դրսևորվում էր նրա ձևավորման կարգը և կառուցվածքը սահմանող սահմանադրական նորմերից: Բացի այդ, Ազգային ժողովն էր ներկայացնում Հայաստանի ժողովրդին և նա իրավունք ուներ հանդես գալու ժողովրդի իշխանությունը կրողի դերում: Ինչ վերաբերվում է Ազգային ժողովի՝ օրենսդիր մարմին լինելուն, ապա այդ դրույթը հստակ ամրագրված էր Սահմանադրությամբ: Վերջինս սահմանում էր, որ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը:

Հարկ է նշել, որ թեպետ Սահմանադրության համաձայն երկրում օրենսդիր իշխանությունը պետք է իրականացներ Ազգային ժողովը, բայց նրա օրենսդրական գործունեությանը ուղղակի, թե անուղղակի, կարող էին միջամտել պետական իշխանության այլ մարմիններ: Այսպես՝ Ազգային ժողովի օրենսդրական գործունեությանը կարող էր միջամտել Հանրապետության նախագահը: Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքը ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում էր այն: Այդ ժամկետում նախագահը կարող էր օրենքն առարկություններով և առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր

քննարկում (հոդված 55, կետ 2): Դա նշանակում է, որ Սահմանադրությունը նախագահին օժտել էր հետաձգող արգելքի (**վետո**) իրավունքով:

Ազգային ժողովի օրենսդրական գործունեությանը միջամտելու իրավունք ունեին նաև կառավարությունը և Սահմանադրական դատարանը: Հայաստանի կառավարությունն ուներ օրենսդրական նախաձեռնության իրավունք, ընդ որում, կառավարությունն էր սահմանում իր ներկայացրած օրենքի նախագծի քննարկման հաջորդականությունը և կարող էր պահանջել, որ այն քվեարկության դրվի միայն իր համար ընդունելի ուղղումներով: Բացի այդ, կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի կապակցությամբ կարող էր դնել իր վստահության հարցը: Եվ եթե Ազգային ժողովը որոշում չէր կայացնում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, օրենքի նախագիծը ընդունված էր համարվում (հոդված 75):

Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա կարող էր ազդեցություն գործել նաև Սահմանադրական դատարանը: Վերջինիս հիմնական խնդիրներից մեկը օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հանրապետության նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության իրավական ակտերի սահմանադրականության որոշումն էր: Ազգային ժողովի ընդունած ցանկացած օրենք Սահմանադրական դատարանի կողմից կարող էր ճանաչվել ոչ սահմանադրական և իր ուժը կորցնել, եթե իրոք նման հիմքեր լինեին (հոդված 100):

Ազգային ժողովի կողմից օրենսդրական իշխանության իրականացման լիազորությունը բացարձակ չէր: Սահմանադրությունն ամրագրում էր մի այնպիսի վտանգավոր ինստիտուտ, ինչպիսին պատվիրակված օրենսդրական ինստիտուտն էր, որն իր էությամբ անհարիր էր պառլամենտարիզմին: Այս ինստիտուտի համաձայն՝ կառավարության գործունեության ծրագրի օրենսդրական ապահովման նպատակով Ազգային ժողովը կարող էր լիազորել կառավարությանը՝ ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք պետք է գործեին Ազգային ժողովի կողմից սահմանված ժամկետում և չէին կարող հակասել օրենքներին: Այդ որոշումները, ինչպես և օրենքները, պետք է ստորագրեր հանրապետության նախագահը (հոդված 78):

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկրում հաստատում էր **սահմանափակ պառլամենտարիզմ**, որքանով որ ամրագրում էր Ազգային ժողովի անուղղակի ենթակայությունը գործադիր իշխանությանը: Մասնավորապես, Սահմանադրությունն ամրագրում էր Ազգային ժողովի սահմանափակ լիազորություններ՝ գործադիր իշխանության կազմավորման գործում, ինչպես նաև Հանրապետության նախագահի և կառավարության յուրահատուկ հարաբերություններ:

Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը գերակա դիրք ուներ ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ կառավարության և

դատական իշխանության մարմինների նկատմամբ: **Սահմանադրությունն, ըստ էության, վերացնում կամ չեզոքացնում էր պառլամենտարիզմի մի այնպիսի կարևոր տարր, ինչպիսին իշխանությունների բաժանումն էր:** Սահմանադրությունը չէր նախատեսում զսպումների և հակակշիռների մեխանիզմ ինչպես Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի, այնպես էլ՝ վերջինիս և կառավարության, ինչպես նաև Հանրապետության նախագահի և կառավարության, Հանրապետության նախագահի և դատական իշխանության մարմինների փոխհարաբերություններում: Փաստորեն, Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահը իշխանության առանձին ճյուղերից և ոչ մեկի մեջ չէր մտնում և կարծես վեր էր կանգնած այդ ճյուղերից: Այդ մասին է վկայում նաև Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի, կառավարության, դատական իշխանության մարմինների հարաբերությունները կարգավորող սահմանադրական նորմերի վերլուծությունը: Այսպես, Հանրապետության նախագահին Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող էր արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություն (հոդված 55, կետ 3): Սահմանադրությունը չէր նախատեսում Հանրապետության նախագահի կողմից Ազգային ժողովի արձակման հիմքերը, ինչը նրան տալիս էր ազատ գործելու և գործնականում ցանկացած պահին Ազգային ժողովն արձակելու հնարավորություն: Այն, որ Հանրապետության նախագահը կարող էր Ազգային ժողովն արձակել միայն նրա նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո, որևէ կերպ չէր կարող կաշկանդել Հանրապետության նախագահին: Նախ՝ Սահմանադրությամբ նախատեսված չէր, թե կարծիքների հակադրության դեպքում Նախագահին ինչպես պետք է վարվեր, և երկրորդ՝ նշված պաշտոնատար անձանց կարծիքները պարտադիր են Նախագահի համար, թե՞ ոչ, նույնպես պարզ չէր:

Ազգային ժողովի արձակման հարցում Հանրապետության նախագահը միայն չնչին սահմանափակումների էր ենթարկվում: Նախագահը չէր կարող Ազգային ժողովն արձակել Ազգային ժողովի ընտրություններից հետո մեկ տարվա ընթացքում, ռազմական դրության, սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, ինչպես նաև իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում:

Հակառակ այս ամենին, Ազգային ժողովը որևէ կերպ չէր կարող ազդել Հանրապետության նախագահի գործունեության վրա և պաշտոնանկ անել նրան: Ճիշտ է, Սահմանադրությունը նախատեսում էր, որ Հանրապետության նախագահը Ազգային ժողովի կողմից կարող էր պաշտոնանկ արվել պետական դավաճանության կամ այլ ծանր հանցագործություն կատարելու դեպքում, սակայն նախագահի պաշտոնանկությունը խիստ բարդեցված էր: Նախ՝ Հանրապետության նախագահի կողմից պետական դավաճանություն կամ այլ ծանր հանցագործություն կատարելը, բնական է, պետք է

հաստատված լինել դատարանի դատավճռով, և երկրորդ՝ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին եզրակացությունը ստանալու համար Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ պետք է դիմեր Սահմանադրական դատարան, այնուհետև, դրական եզրակացություն ստանալու դեպքում պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով որոշում կայացներ Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու մասին (հոդված 57): Ակնհայտ է, որ սահմանադրական ճանապարհով Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելը գործնականում անհնար էր: Նույնիսկ Հանրապետության նախագահի ծանր հիվանդության կամ լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքում Ազգային ժողովը մեծ դժվարությամբ կարող էր պաշտոնանկ անել նրան: Այդպիսի դեպքերում Ազգային ժողովը կառավարության առաջարկով և Սահմանադրական դատարանի համապատասխան եզրակացության հիման վրա Հանրապետության նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին կարող էր որոշում ընդունել պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն երկու երրորդով (հոդված 59):

Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության նախագահն ընդարձակ լիազորություններ ուներ վարչապետի և կառավարության անդամների նշանակման ու ազատման հարցերում: Հանրապետության նախագահն ընդարձակ լիազորություններ ուներ նաև կառավարության գործունեության ղեկավարման ոլորտում: Սահմանադրությունը նախատեսում էր, որ կառավարությունն ինքը կարող էր դնել իր վստահության հարցը: Կառավարությունն իր վստահության հարցը կարող էր բարձրացնել իր գործունեության ծրագրի, բյուջեի մասին օրենքի նախագծի հաստատման, ինչպես նաև իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ:

Եթե նկատի ունենանք, որ Հանրապետության նախագահն ըստ էության ուներ Ազգային ժողովն արձակելու անսահմանափակ իրավունք, ապա պարզ է դառնում, թե Ազգային ժողովի վրա ճնշում գործադրելու ինչպիսի հզոր միջոցի էր վերածվում կառավարության կողմից իր վստահության հարցը դնելու ինստիտուտը:

Հայաստանի Սահմանադրությունը չէր լուծում դատական իշխանության մարմինների անկախության խնդիրը, ավելին՝ Սահմանադրությունն արդարադատության ոլորտում այնպիսի լիազորություններով էր օժտում Հանրապետության նախագահին, որոնք նրան, ըստ էության, վեր էին դասում նաև դատական իշխանության մարմիններից:

Պետական իշխանության մարմինների և նրանց հարաբերությունների վերաբերյալ սահմանադրական-իրավական նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1995-2005 թվականների ընթացքում Հայաստանում հաստատվել

էր սահմանափակ պառլամենտարիզմ, իսկ ամուր նախագահական իշխանության առկայությունը վկայում է, որ պետական կառավարման ձևի տեսանկյունից այն, մեր գնահատմամբ՝ ռացիոնալիզացված պառլամենտարիզմ էր: Սակայն նշված ժամանակաշրջանում Հայաստանում պառլամենտարիզմի մասին ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է վերլուծել ոչ միայն համապատասխան սահմանադրական-իրավական նորմերը, այլև այդ նորմերի կիրառման ընթացքը և փաստացի սահմանադրաիրավական հարաբերությունները: Իսկ նշված ժամանակաշրջանում Հայաստանի սահմանադրաիրավական հարաբերությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությամբ նախատեսված սահմանափակ պառլամենտարիզմը գործնականորեն շատ արագ վերածվեց իմիտացիոն պառլամենտարիզմի: Այդ մասին են վկայում Հայաստանում 1995-2005 թվականների քաղաքական իրադարձությունները:

1995 թվականի հուլիսի 5-ին տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրություններ: Այդ ժամանակ իշխող Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) համախմբեց մի շարք կուսակցությունների և ձևավորեց «Հանրապետություն» միավորումը:

Ազգային ժողովի ընտրություններն անցան պառլամենտարիզմի տարրական պահանջների խայտառակ խախտումներով: Հայ պատմաբանների վկայությամբ՝ «խորհրդարանական այդ ընտրություններն անցան աննախադեպ խախտումների, անարդարության մթնոլորտում: Խորհրդարանում անհրաժեշտ թվով տեղեր նվաճելու նպատակով՝ իշխող ՀՀՇ կուսակցությունը դիմեց քվեաթերթիկների բացահայտ կեղծման, մամուլի և ընտրողների ահաբեկման, կատարեց ժողովրդավարության գաղափարները վարկաբեկող ամենատարբեր գործողություններ, ինչպես օրինակ «զուգահեռ» կազմակերպությունների ստեղծումը, կուսակցությունները մեկը մյուսին հակադրելը»¹:

Այս պայմաններում Ազգային ժողովը չէր կարող համարվել ժողովրդի ներկայացուցչական մարմինը: Համապատասխանաբար, Սահմանադրությամբ Հայաստանում նախատեսված սահմանափակ պառլամենտարիզմը գործնականում վերածվեց իմիտացիոն պառլամենտարիզմի:

Հայաստանում իմիտացիոն պառլամենտարիզմն ամրապնդվեց 1996 թվականի սեպտեմբերի 22-ին կայացած նախագահական ընտրություններից հետո: Հանրապետության նախագահի ընտրությունները նույնպես անցան բացահայտ ընտրակեղծիքներով և խախտումներով, և Հանրապետության նախագահ ընտրվեց «Հանրապետություն» միավորման թեկնածուն: Հայաստանի նախագահի նշված ընտրություններից հետո երկիրն ունեցավ ոչ միայն ոչ լեգիտիմ Ազգային ժողով, այլև ոչ լեգիտիմ նախագահ: Իսկ դա նշանակում

¹ Հայոց պատմություն: Խմբագրությամբ՝ պրոֆ. Հր. Սիմոնյանի, Երևան, 2002, էջ 793:

է, որ պառլամենտարիզմի մասին խոսք անգամ չէր կարող լինել: Այսպես Հայաստանում ամրապնդվեց իմիտացիոն պառլամենտարիզմը:

1997 թվականի նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի նախագահը հրավիրվեց Հայաստան և նշանակվեց երկրի վարչապետ: 1998 թվականի փետրվարին Հանրապետության նախագահը՝ չնայած իր սահմանադրական մեծ լիազորություններին, հրաժարական տվեց: Այդ հրաժարականը պայմանավորված էր նաև Հանրապետության նախագահի ոչ լեգիտիմությամբ, ժողովրդի մեջ հենարան չունենալու և վստահությունը կորցնելու հանգամանքներով: Համապատասխանաբար, Ազգային ժողովում տեղի ունեցան քաղաքական ուժերի վերախմբավորումներ: Իշխող «Հանրապետություն» միավորումը փլուզվեց, և Ազգային ժողովում ձևավորվեց ու գերիշխող դիրք գրավեց «Երկրապահ» պատգամավորական խումբը: Այդպես ՀՀԸ-ն կորցրեց իշխանությունը:

Իշխանության կուսակցությունը, որպես քաղաքական կյանքի երևույթ, դարձել է ետխորհրդային երկրների, այդ թվում՝ Հայաստանի քաղաքական իրականության հիմնական տարրերից մեկը: Քաղաքական կյանքի այս երևույթը **հայտնի չէ Արևմուտքի երկրներին, որտեղ տարածված է «կառավարող կուսակցություն» հասկացությունը:** Սակայն իշխանության կուսակցությունը տարբերվում է կառավարող կուսակցությունից: Եթե իշխանության կուսակցությունը կազմված է իշխող վերնախավի՝ քաղաքական տարբեր հայացքներ ունեցող կամ ընդհանրապես քաղաքական հայացքներ չունեցող ներկայացուցիչներից, որոնց միավորում է մեկ նպատակ՝ իշխանությունը պահելն ու վերարտադրվելը, ապա կառավարող կուսակցությունը կազմված է միևնույն քաղաքական հայացքներ ունեցող անձանցից, որոնց համար իշխանություն նվաճելն ու պահպանելը ոչ թե նպատակ է, այլ իրենց քաղաքական ծրագրերն իրականացնելու միջոց: Բացի այդ, եթե իշխանական կուսակցության ռազմավարությունը ձևավորվում և մշակվում է կուսակցության ինստիտուցիոնալ կառուցվածքից դուրս, ապա կառավարող կուսակցության ռազմավարությունը ձևավորվում և մշակվում է կուսակցության ինստիտուցիոնալ կառուցվածքի ներսում:

Իշխանական կուսակցությունների ծագման պատճառը ետխորհրդային պետություններում բազմակուսակցական և ժողովրդավարական ընտրությունների ձևավորման անցումային շրջանի առկայությունն էր: Այս շրջանում հասարակության տարբեր սոցիալ խմբերի քաղաքական շահերի ինստիտուցիոնալ ձևակերպման համար բնական ճանապարհով կազմավորվող կուսակցությունները թույլ էին, տկար, և քաղաքական գործիչները խմբվում էին իրական իշխանություն կամ իշխանության հավակնություն ունեցող առաջնորդների շուրջը:

Հայաստանում առաջին իշխանական կուսակցությունը Հայաստանի նորացված հանրապետական կուսակցությունն էր, որն ստեղծվեց պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ: ՀՀԿ-ի

կազմավորման նպատակը Ազգային ժողովի սպասվող ընտրություններում ձայների մեծամասնությունն ստանալն էր, իշխանությունը նվաճելը և քաղաքական տարածքը վերակազմավորելը:

Նորացված ՀՀ-ն 1988 թվականին միավորվեց Հայաստանի ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) հետ: ՀԺԿ-ն նույնպես իշխանական կուսակցություն էր, որն ստեղծվել էր Կարեն Դեմիրճյանի կողմից: ՀՀ-ի և ՀԺԿ-ի դաշինքն անվանվեց «Միասնություն»: Հայաստանի քաղաքական կյանքում սաղմնավորվում էր նոր քաղաքական ճգնաժամ:

1999 թվականի մայիսի 30-ին տեղի ունեցան Ազգային ժողովի ընտրություններ, որին մասնակցում էին շուրջ քսանմեկ կուսակցություններ, դաշինքներ և հասարակական-քաղաքական միավորումներ: Համամասնական ընտրակարգով ընտրվող՝ խորհրդարանի 56 պատգամավորական տեղերից ամենաշատ ձայներ ստացավ «Միասնություն» դաշինքը՝ 41,69 տոկոս, որն Ազգային ժողովում կազմեց բացարձակ մեծամասնություն և ընտրություններում տարավ լիարժեք հաղթանակ:

Ազգային ժողովում «Միասնություն» դաշինքի հաղթանակով երկրում ստեղծվեց բոլորովին նոր քաղաքական իրավիճակ: Դաշինքը չէր սատարում Հանրապետության նախագահին և նրա նշանակած կառավարությանը: Հայաստանը հայտնվեց քաղաքական ճգնաժամի ճիրաններում: Հանրապետության նախագահը, ունենալով սահմանադրական հսկայաժամպլ լիազորություններ, հայտնվեց երկիմաստ վիճակում: Նա, Ազգային ժողովում չունենալով իրեն սատարող քաղաքական մեծամասնություն, ըստ էության, մեկուսացվում էր քաղաքական գործընթացներից: Քանի որ «Միասնություն» դաշինքը չէր սատարում նաև վարչապետին, Հանրապետության նախագահն ստիպված էր առաջարկել ընտրություններում հաղթանակած քաղաքական ուժին՝ «Միասնություն» դաշինքին, ձևավորելու նոր կառավարություն: 1999 թվականի հունիսի 11-ին վարչապետ նշանակվեց «Միասնություն» դաշինքի ղեկավար, պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը:

Այդ նշանակումով երկրի քաղաքական ճգնաժամը չվերացավ, այլ ավելի խորացավ: Հանրապետության նախագահի և վարչապետի միջև առկա էր հակադրություն, նույնիսկ՝ քաղաքական առճակատում: Ակնհայտ էր, որ Հանրապետության նախագահը և կառավարությունը չէին կարող համատեղ մշակել և իրականացնել երկրի ներքին և արտաքին քաղաքականությունը, իսկ գործող Սահմանադրությունը նման քաղաքական իրավիճակից դուրս գալու որևէ լուծում չէր նախատեսում: Այս պայմաններում քաղաքական ճգնաժամը կարող էր լուծվել կա՛մ Հանրապետության նախագահի հրաժարականով, կա՛մ Ազգային ժողովի արձակմամբ: Հանրապետության նախագահը հրաժարական տալ չէր ցանկանում, Ազգային ժողովն արձակվել չէր կարող՝ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում վարչապետ Վազգեն Սարգսյանի և Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի հետ:

Հայաստանում քաղաքական ճգնաժամը լուծվեց անսպասելի և արտառոց կերպով: 1999 թվականի հոկտեմբերի 27-ին ահաբեկիչների մի խումբ մուտք գործեց Ազգային ժողովի շենք, որտեղ այդ ժամանակ նիստ էր ընթանում, և նիստին ներկա էին վարչապետն ու կառավարությունը: Ահաբեկիչները գնդակահարեցին Ազգային ժողովի ղեկավարությանը, այդ թվում՝ Կարեն Դեմիրճյանին, վարչապետ՝ Վազգեն Սարգսյանին և այլ պատգամավորներին ու նախարարներին. «Միասնություն» դաշինքը գլխատվեց:

Ահաբեկչությունից հետո քաղաքական ճգնաժամն անմիջապես չհարթվեց: Հանրապետության նախագահի և նրա շրջապատի գործունեության և ձեռնարկած զանազան միջոցների շնորհիվ, 2000 թվականին Հայաստանի ներքաղաքական իրավիճակը քիչ թե շատ կայունացավ:

2003 թվականի փետրվարի 19-ին տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության նախագահի չորրորդ ընտրությունները: Քվեարկվեցին Հանրապետության նախագահի ինը թեկնածուներ, այդ թվում՝ Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Երկրորդ փուլ դուրս եկան թեկնածուներ Ռոբերտ Քոչարյանը և Ստեփան Դեմիրճյանը: Երկրորդ փուլում, որը տեղի ունեցավ 2003 թվականի մարտի 5-ին, Հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Հայաստանի բնակչության մի մասը, ինչպես վկայում է այդ օրերի մամուլը, գտնում էր, որ ընտրությունները կեղծված են:

2003 թվականի մայիսի 25-ին տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրությունները, որոնց մասնակցում էին **21 կուսակցություններ և դաշինքներ**: Ազգային ժողովի ընտրություններում հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին վեց կուսակցություն և դաշինք: Սակայն ընտրություններում ոչ մի քաղաքական ուժ չկարողացավ ստանալ ընտրողների ձայների մեծամասնությունը: Հատկանշական է, որ երբեմնի իշխանական կուսակցություն եղած ՀԺԿ-ն դադարեց այդպիսին լինելուց, իսկ մյուս իշխանական կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, շարունակեց մնալ նույն իշխանական կուսակցությունը, որի անդամներն արդեն համախմբվել էին Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի շուրջ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը վաղուց արդեն փոփոխությունների կարիք ուներ, և դեռևս Հանրապետության նախագահի 1998 թվականի մայիսի 19-ի հրամանագրով ստեղծվել էր սահմանադրական փոփոխությունների հանձնաժողով, սակայն այդ փոփոխություններն իրականություն դարձան միայն 2005 թվականի նոյեմբերի 27-ին անցկացված հանրաքվեով: Սահմանադրական փոփոխություններով Հայաստանում սկսվեց ժողովրդավարության և պառլամենտարիզմի զարգացման նոր փուլ:

Սահմանադրական փոփոխությունները չանդադարձան Հայաստանի պետական կառավարման ձևի վրա: Հայաստանը մնաց որպես կիսանախագահական հանրապետություն: Սահմանադրական փոփոխություններով միայն ուժեղացվեցին պետական կառավարման ձևի խորհրդարանական տարրերը:

Սահմանադրական փոփոխություններով, ի թիվս այլնի, արձանագրվեց նաև, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3):

Սահմանադրական փոփոխություններով, ըստ էության, ամրագրվում էին նոր արժեքային համակարգի հիմքեր: Մարդը համարվում էր հիմնական արժեք, համապատասխանաբար, փոփոխվում էին անհատի և պետության հարաբերությունների բնույթն ու հիմքերը:

Ուշագրավ է իշխանությունների տարանջատումն ամրագրող նորմի փոփոխությունը: Այդ փոփոխմամբ «իշխանությունների տարանջատում» հասկացությունը փոխարինվեց «իշխանությունների բաժանում» հասկացությամբ, ինչը, մեր կարծիքով, ավելի ճշգրիտ է արտահայտում այն երևույթը, որն արտացոլվում է: Փոփոխված Սահմանադրությամբ ամրագրվեց, որ պետական իշխանությունը Հայաստանում իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա (հոդված 5): **Այս նորմով ամրագրվեց ոչ միայն իշխանությունների բաժանման, այլև նրանց հավասարակշռության անհրաժեշտությունը, ինչը պառլամենտարիզմի կարևորագույն բաղադրիչի ամբողջացումն էր:**

Սահմանադրական փոփոխություններով սահմանվում էր, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Դա նշանակում է, որ այդ մարմիններն ու պաշտոնատար անձինք չեն կարող իրենց իսկ կողմից ընդունված ենթաօրենսդրական ակտերով իրենց վերապահել ինչ-ինչ լիազորություններ, ինչը հնարավոր էր նախորդ խմբագրությամբ Սահմանադրությամբ: Անուղղակի կերպով այս նորմն, ըստ էության, ամրապնդում էր Սահմանադրության և օրենքների գերակայությունը, որը նույնպես պառլամենտարիզմի պահանջներից մեկն է: Սահմանադրական փոփոխություններով վերանայվեց Հայաստանում օրենքի գերակայությունը երաշխավորելու դրույթը և հստակ ամրագրվեց գործող իրավական ակտերի աստիճանականությունը՝ Սահմանադրություն-օրենքներ-այլ իրավական ակտեր (հոդված 6):

Իրենց բոլոր թերություններով հանդերձ՝ սահմանադրական փոփոխություններն առաջընթաց քայլ էին Հայաստանում պառլամենտարիզմի զարգացման գործում:

Սահմանադրական փոփոխությունները չանդրադարձան Հանրապետության նախագահի հիմնական գործառույթներին: Նախագահը շարունակում էր հետևել Սահմանադրության պահպանմանը, ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Նա շարունակում էր մնալ Հանրապետության անկախության, տարածքային ամբողջ-

ջականության և անվտանգության երաշխավորը (հոդված 49): Փոխարենը սահմանադրական փոփոխություններն անդրադարձան Հանրապետության նախագահի դերին և կարգավիճակին: Սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց, որ Հանրապետության նախագահը պետության գլուխն է: Այդպիսի դրույթ չէր պարունակում ո՛չ «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» 1991 թվականի օգոստոսի 1-ի օրենքը, որի համաձայն հանրապետության Նախագահը համարվում էր գործադիր իշխանության գլուխը, ո՛չ նախկին խմբագրությամբ Սահմանադրությունը: Սովորաբար, պետության գլուխ է համարվում պետության այն պաշտոնատար անձը կամ հրապարակային իշխանության մարմինը, որն օժտված է երկրի ներսում և միջազգային հարաբերություններում պետությունը ներկայացնելու իրավունքով: Սահմանադրական փոփոխություններով ահա այդպիսի իրավունքով օժտվեց Հայաստանի Հանրապետության նախագահը:

Հարկ է նշել, որ սահմանադրական փոփոխություններով, ընդհանուր առմամբ, սահմանափակվեցին Հանրապետության նախագահի լիազորությունները, սակայն երկրի հասարակական քաղաքական կյանքի որոշ բնագավառներում այդ լիազորությունները ընդարձակվեցին: Այդ տեսակետից իրավական և քաղաքական որոշակի հետաքրքրություն են ներկայացնում Հանրապետության նախագահի լիազորությունները օրենսդիր և գործադիր իշխանությունների իրականացման ոլորտներում, ինչպես նաև Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի, Հանրապետության նախագահի և կառավարության սահմանադրական-իրավական սկզբունքները:

Անդրադառնալով օրենսդիր իշխանության ոլորտում Հանրապետության նախագահի լիազորություններին՝ նշենք, որ այդ ոլորտում Հանրապետության նախագահի լիազորություններում սահմանադրական էական փոփոխություններ չէին կատարվել: Հանրապետության նախագահը պահպանել էր վետոյի իրավունքը: Բացի այդ, նախկինի պես նա ստորագրում և հրապարակում էր Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքները: Հանրապետության նախագահը պահպանել էր նաև հրամաններ և կարգադրություններ հրապարակելու լիազորությունը: Սահմանադրական փոփոխություններով միայն վերապահում էր կատարվել, որ Հանրապետության նախագահի հրամանագրերը և կարգադրությունները չեն կարող հակասել Սահմանադրությանն ու օրենքներին (հոդված 56):

Սահմանադրական փոփոխություններով վերակառուցվեցին Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի այն հարաբերությունները, որոնք կապված էին կառավարության կազմավորման հետ, մասնավորապես վարչապետի նշանակման և ազատման հարցերում: Եթե մինչ սահմանադրական փոփոխությունները Հանրապետության նախագահն իր հայեցողությամբ էր նշանակում և ազատում վարչապետին, իսկ Ազգային ժողովը լիովին մեկուսացված էր այդ կարևոր գործընթացից, կառավարության կազմը

չէր էլ հաստատվում Ազգային ժողովում, ապա սահմանադրական փոփոխություններով նախատեսվեց բոլորովին այլ կարգ: Ամրագրվեց, որ Հանրապետության նախագահը Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա վարչապետ է նշանակում պատգամավորների մեծամասնության վստահությունը վայելող անձին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա առավել թվով պատգամավորների վստահությունը վայելող անձին (հոդված 55, կետ 4):

Սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ վարչապետի նշանակումից հետո քսանորյա ժամկետում պետք է կազմավորվեր կառավարություն, որի անդամներին վարչապետի առաջարկությամբ նշանակում էր Հանրապետության նախագահը: Կառավարությունն իր կազմավորումից հետո քսանորյա ժամկետում պետք է Ազգային ժողովին ներկայացներ իր ծրագիրը: Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագրին հավանություն տալու հարցը պետք է քննարկվեր արտահերթ և քվեարկության դրվեր այն ներկայացնելուց հետո հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումը պետք է ընդունվեր Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (հոդված 74): Եթե Ազգային ժողովը երկու ամսվա ընթացքում երկու անգամ անընդմեջ հավանություն չտար կառավարության ծրագրին, Հանրապետության նախագահը պետք է արձակեր Ազգային ժողովը (հոդված 74.1):

Սահմանադրական փոփոխություններով Հանրապետության նախագահը չէր կարող պաշտոնանկ անել վարչապետին, ինչպես նախկինում էր: Հանրապետության նախագահը կարող էր միայն Ազգային ժողովին ներկայացնել կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ (հոդված 84): Ի դեպ, կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ կարող էր ներկայացվել նաև պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմից, ինչը նախկինում նախատեսված չէր: Կառավարությանը կարելի էր անվստահություն հայտնել Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Խոսելով Հանրապետության նախագահ - Ազգային ժողով հարաբերությունների մասին՝ նշենք, որ սահմանադրական կարևոր փոփոխություններ կատարվեցին նաև Հանրապետության նախագահի կողմից Ազգային ժողովի արձակման հարցերում: Մինչև սահմանադրական փոփոխությունները Հանրապետության նախագահը, խորհրդակցելով Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, կարող էր արձակել Ազգային ժողովը և նշանակել արտահերթ ընտրություններ: Հանրապետության նախագահի այս իրավունքն, ըստ էության, անսահմանափակ էր: Սահմանադրական փոփոխություններով այս իրավունքը սահմանափակվեց: Հանրապետության նախագահը կարող էր արձակել Ազգային ժողովը, միայն որոշակի դեպքերում և կարգով (հոդված

55, կետ 3): Հանրապետության նախագահը կարող էր արձակել Ազգային ժողովը, եթե վերջինս երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չէր տալիս կառավարության ծրագրին: Բացի այդ, Հանրապետության նախագահը Ազգային ժողովը որոշակի դեպքերում կարող էր արձակել՝ Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ: Այդ դեպքերը երեքն էին: Առաջին՝ Ազգային ժողովը հերթական նստաշրջանի ընթացքում որոշում չի կայացնում կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի վերաբերյալ, երկրորդ՝ հերթական նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը երեք ամսից ավելի իր կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում (հոդված 74.1): Ինչպես տեսնում ենք, սահմանադրական փոփոխությունները միտված էին ոչ թե Ազգային ժողովի նկատմամբ Հանրապետության նախագահի գերակայությունն ապահովելուն, ինչպես մինչ այդ էր, այլ Հանրապետության նախագահ - Ազգային ժողով - կառավարություն եռյակում հնարավոր հակասությունները սահմանադրական ճանապարհով լուծելուն:

Սահմանադրական փոփոխությունների ենթարկվեցին նաև Հանրապետության նախագահի և կառավարության հարաբերությունները: Եթե նախկին խմբագրությամբ Սահմանադրության համաձայն կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում էր Հանրապետության նախագահի հրամանագրով, ապա սահմանադրական փոփոխություններով հստակ ամրագրվեց, որ կառավարության կառուցվածքը կառավարության առաջարկությամբ սահմանվում է օրենքով: Սակայն սահմանադրական փոփոխություններն անհասկանալի կերպով պահպանեցին այն դրույթը, ըստ որի կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության նախագահի կողմից:

Սահմանադրական փոփոխություններով կառավարությունն ինքնուրույնություն էր ձեռք բերում իր գործունեության կազմակերպման հարցերում: Եթե նախկին խմբագրությամբ սահմանադրությամբ կառավարության նիստերը հրավիրում և վարում էր Հանրապետության նախագահը, ապա սահմանադրական փոփոխություններով կառավարության նիստերը պետք է հրավիրեր և վարեր վարչապետը: Սակայն արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության հարցերով կառավարության նիստը կարող էր հրավիրել և վարել Հանրապետության նախագահը (հոդված 86): Բացի այդ, եթե նախկին խմբագրությամբ սահմանադրությամբ կառավարության որոշումները ստորագրում էր վարչապետը և վավերացնում՝ Հանրապետության նախագահը, ապա սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց, որ կառավարության որոշումները ստորագրում է վարչապետը՝ առանց Հանրապետության նախագահի հետագա վավե-

րացման: Միևնույն ժամանակ Հանրապետության նախագահին իրավունք վերապահվեց կասեցնել կառավարության որոշումների գործողությունը մեկ ամիս ժամկետով և դիմել Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանը դրանց համապատասխանության հարցը պարզելու համար (հոդված 86):

Մեր կարծիքով, սակայն, Հանրապետության նախագահի և կառավարության հարաբերությունների նորովի սահմանադրական կարգավորումը վկայում է այն մասին, որ սահմանադրական փոփոխությունները, այնուամենայնիվ, չվերացրեցին կառավարության կախվածությունը Հանրապետության նախագահից, այլ միայն սահմանափակեցին:

Սահմանադրական փոփոխություններով նկատելիորեն բարձրացվեց Ազգային ժողովի դերը երկրի հասարակական քաղաքական կյանքում: Դրանով իսկ ամրապնդվեցին պառլամենտարիզմի հիմքերը Հայաստանում: Սահմանադրական փոփոխությունները չանդադարձան Ազգային ժողովի բնույթի հստակեցմանը: Ի տարբերություն շատ երկրների սահմանադրությունների, որոնք ամրագրում են իրենց երկրների պառլամենտների ներկայացուցչական բնույթը, Ազգային ժողովը, ըստ Սահմանադրության, մնաց որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին (հոդված 62): **Այսպիսի մոտեցումը, երբ Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը չի ամրագրվում, մեր գնահատմամբ՝ կասկածի տակ է դնում ընտրողների կամքն արտահայտելու և նրանց շահերը ներկայացնելու՝ Ազգային ժողովի որպես ժողովրդի իշխանությունը կրողի, դերն ու նշանակությունը:**

Սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց, որ Ազգային ժողովն իր կանոնակարգ օրենքով նախատեսված կարգով կարող է ընդունել նաև ուղերձներ և հայտարարություններ (հոդված 62): Այս լիազորությունը Ազգային ժողովին հնարավորություն էր ընձեռում երկրի ներքին և արտաքին կյանքի կարևոր ու հրատապ խնդիրների կապակցությամբ դրսևորելու սեփական քաղաքական դիրքորոշում:

Սահմանադրական փոփոխություններով երկարացվեց Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը: Սահմանվեց, որ Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով՝ նախկին չորս տարվա փոխարեն (հոդված 63):

Սահմանադրական փոփոխությունները չվերանայեցին Ազգային ժողովի պատգամավորների թվաքանակը, որը մնաց նույնը՝ հարյուր երեսունմեկ պատգամավոր: Սակայն համամասնական և մեծամասնական ընտրակարգերով ընտրված պատգամավորների թվաքանակը համապատասխան օրենքով՝ սկսած 1995 թվականից, անընդհատ փոփոխվել է:

Սահմանադրական փոփոխություններով կրկնապատկվեց Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թիվը: Եթե նախկին խմբագրությամբ սահմանադրությամբ Ազգային ժողովը կարող էր ստեղծել վեց մշտական հանձնաժողով, ապա սահմանադրական փոփոխություններով Ազգային

Ժողովում կարող էր ստեղծվել ոչ ավելի, քան տասներկու մշտական հանձնաժողով (հոդված 73): Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թիվն ամրագրելը, ըստ էության, ժողովրդի ներկայացուցչական մարմնի իրավունքների անհարկի սահմանափակում է, որը կարող է կաշկանդել այդ մարմնին և լուրջ ազդեցություն գործել նրա գործունեության արդյունավետության վրա:

Սահմանադրական փոփոխություններով վերացվեց պատվիրակված օրենսդրության ինստիտուտը, որը նախատեսված էր նախկին խմբագրությամբ Սահմանադրությամբ (հոդված 78): **Դա Հայաստանում պառլամենտարիզմի հետագա զարգացմանն ուղղված լուրջ առաջընթաց քայլ էր, որովհետև պատվիրակված օրենսդրությունը և պառլամենտարիզմը անհամատեղելի են:**

Վերը նշվածից բացի, սահմանադրական փոփոխություններով՝

- ամրագրվեց գործադիր իշխանության նկատմամբ պառլամենտական վերահսկողության այնպիսի մի միջոց, ինչպիսին է հարցապնդման ինստիտուտը,

- վերանայվեց Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու հարցը,

- ամրագրվեց Ազգային ժողովի կողմից վավերացման ենթակա միջազգային պայմանագրերի շրջանակը,

- ամրագրվեցին Ազգային ժողովի բացառիկ օրենսդրական կարգավորման ոլորտները,

- հստակեցվեցին պետական մարմինների ձևավորման և պաշտոնատար անձանց ընտրության կամ նշանակման գործում Ազգային ժողովի լիազորությունները,

- սահմանվեցին դատարանակազմության նոր հիմունքների ամրագրման ու դատական իշխանության անկախության ամրապնդմանն ուղղված դրույթները,

- սահմանվեց արդարադատության խորհրդի կազմավորման նոր կարգ,

- ճշգրտումներ կատարվեցին սահմանադրական արդարադատության ոլորտում, մասնավորապես, ընդլայնվեց Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակը:

Եթե ընդհանուր առմամբ բնութագրելու լինենք 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով Հայաստանում հաստատված պառլամենտարիզմը, ապա կարող ենք ասել, որ դրանցով Հայաստանում պետք է հաստատվեր թույլ զարգացած, բայց, այնուամենայնիվ, զարգացած պառլամենտարիզմ: Գործնական կյանքում այդպիսի պառլամենտարիզմը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր միայն հստակ կենսագործել Սահմանադրությունը: Սակայն, Հայաստանի 2005-2015 թվականների

հասարակական-քաղաքական կյանքի հետագա զարգացումները ցույց տվեցին, որ երկրում հաստատվել է բոլորովին այլ պառլամենտարիզմ:

Այսպես՝ 2007 թվականի մայիսի 12-ին տեղի ունեցան չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները: Այդ ընտրություններում հինգ տոկոսի շեմը հաղթահարեցին Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որը ստացավ 63 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 26 մանդատ, ՀՅԴ-ն՝ 16 մանդատ, «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 8 մանդատ, «Ժառանգություն» կուսակցությունը՝ 7 մանդատ: Ազգային ժողովի ամենաշատ մանդատներն ստացավ ՀՀԿ-ն, որը որպես իշխանության կուսակցություն, պահպանեց իր դիրքերը: Ժողովրդի մի զգալի մասը կրկին համոզված էր, որ ընտրությունները կեղծվել են:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը կազմեցին քաղաքական կոալիցիա, որը համագործակցության համաձայնագիր կնքեց ՀՅԴ-ի հետ: Այս երեք կուսակցություններն էլ սատարում էին Հանրապետության նախագահին: Մի շարք քաղաքական ուժեր, որոնք ակտիվորեն մասնակցում էին նախորդ Ազգային ժողովի և Հանրապետության նախագահի ընտրություններին, այս անգամ չկարողացան հայտնվել Ազգային ժողովում: Քաղաքական կոալիցիան ձևավորեց կառավարություն: Վարչապետ նշանակվեց Սերժ Սարգսյանը: Ակնհայտ էր, որ առաջիկա նախագահական ընտրություններում իշխանությունը պետք է փոխանցվեր վարչապետին՝ Հանրապետության գործող նախագահի համախոհին:

2008 թվականի փետրվարի 18-ին տեղի ունեցան նախագահական հինգերորդ ընտրությունները: Իշխանության կուսակցությունը՝ ՀՀԿ-ն, բնականաբար, նախագահի թեկնածու առաջադրեց հանրապետության վարչապետ Սերժ Սարգսյանին: Գրանցվեցին նախագահի ևս ութ թեկնածուներ, որոնց մեջ առանձնանում էր նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Հանրապետության նախագահի այդ երկու հիմնական թեկնածուներից Սերժ Սարգսյանը ստացավ ընտրողների ձայների 52,8%-ը, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը՝ 22,5% -ը: Լևոն Տեր-Պետրոսյանը և նրա կողմնակիցները, ինչպես նաև ժողովրդի մի սովորական զանգված մերժեցին ընտրությունների արդյունքները: Նրանք գտնում էին, որ այդ արդյունքները կեղծված են:

Հանրապետության նախագահի ընտրություններից անմիջապես հետո երկրում ծայր առան զանգվածային հանրահավաքներ: 2008 թվականի մարտի 1-ին ոստիկանության և ցուցարարների մեջ տեղի ունեցավ լուրջ բախում, որի ընթացքում զոհվեց տասը մարդ, վիրավորվեց ավելի քան երեք հարյուր մարդ: Հանրապետության նախագահի ընտրությունները և հետագա իրադարձությունները կրկին ստվեր գցեցին Հայաստանում ժողովրդավարության վրա, ուժգին հարված հասցրեցին երկրի միջազգային հեղինակությանը, արժեզրկեցին ընտրությունները, խարխլեցին ընտրական

գործընթացների նկատմամբ ժողովրդի վստահությունը: Նախագահական ընտրություններից հետո երկրում ստեղծվեց իշխանությունների նկատմամբ անվստահության և անհանդուրժողականության մթնոլորտ, հասարակությունը երկփեղկվեց և, որպես դրա հետևանք՝ իշխանությունների նկատմամբ անվստահությունը շարունակվում է մինչ օրս:

2012 թվականի մայիսի 6-ին տեղի ունեցան հինգերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները: Այդ ընտրություններին մասնակցում էին ութ կուսակցություններ: Ազգային ժողովի ընտրություններում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացավ 69 մանդատ, «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը՝ 37 մանդատ, «Հայ ազգային կոնգրես» դաշինքը՝ 7 մանդատ, «Օրինաց երկիր» կուսակցությունը՝ 6 մանդատ, ՀՅԴ-ն և «Ժառանգություն» կուսակցությունները՝ հինգական մանդատներ:

2013 թվականի փետրվարի 18-ին տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության նախագահի հերթական ընտրությունները: Քվեարկվեցին նախագահի յոթ թեկնածուներ, այդ թվում՝ հանրապետության գործող նախագահը: Հասկանալի է, որ առավել շատ թվով ձայներ ստացավ գործող նախագահ Սերժ Սարգսյանը՝ 58,6%: Նրա հիմնական մրցակիցը «Ժառանգություն» կուսակցության նախագահ Րաֆֆի Հովհաննիսյանն ստացավ 36,7%-ը: Այս ընտրությունների արդյունքները նույնպես միարժեք չընդունվեցին հասարակության կողմից:

Հայաստանի Հանրապետության նախագահը 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով ստեղծեց իրեն առընթեր սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով: 2014 թվականի ապրիլին հանձնաժողովը հանրապետության նախագահին ներկայացրեց սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Այն ուղարկվեց եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), որն ընդհանուր առմամբ հավանություն տվեց հայեցակարգին: 2015 թվականի մարտի 14-ին Հանրապետության նախագահը նույնպես հավանություն տվեց սահմանադրական բարեփոխումների հայեցակարգին և հանձնարարեց մշակել համապատասխան նախագիծ:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը սկզբունքորեն նոր մոտեցում էր որդեգրում հայկական պետականության առջև ծառացած մի շարք հիմնախնդիրների լուծման հարցում: Հայեցակարգում նշվում էին մի շարք հիմնախնդիրներ, որոնք իրենց հետագա լուծումը պետք է ստանային բարեփոխված Սահմանադրությունում: Այդ հիմնախնդիրներից էին, մասնավորապես, իշխանակենտրոն սահմանադրական համակարգից մարդակենտրոն համակարգի անցումը, սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի հետևողական իրականացման երաշխիքների ստեղծումը, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի առավել հետևողական իրացումը, որը ենթադրում է գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի ներդաշնակություն, իշխանության մարմինների գործառույթային,

հակակշռող և զսպող լիազորությունների հաշվեկշռվածություն, իշխանության տարբեր ճյուղերի պատշաճ գործունեություն և գործառնության անկախության ամրապնդում և այլն: Այդ հիմնախնդիրներից էր համարվում նաև Ազգային ժողովի դերի բարձրացումը՝ արդյունավետ օրենսդրության գործունեության, վերահսկողական գործառնության իրականացման, ինչպես նաև պետական իշխանության և կառավարման մարմինների ձևավորման գործում՝ միաժամանակ ստեղծելով խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության և հակակշռող դերի ամրապնդման համար անհրաժեշտ և բավարար սահմանադրական երաշխիքներ¹:

Հայաստանի քաղաքական գործիչների մի մասը դեմ էր սահմանադրական փոփոխություններին, որոնք նախատեսում էին պետական կառավարման խորհրդարանական ձև: Այդ գործիչները չարախոսում էին, իբր իշխանությունները սահմանադրական բարեփոխումներ են ձեռնարկել ոչ թե Հայաստանում ժողովրդավարությունն ու պառլամենտարիզմը կատարելագործելու, մարդու իրավունքների ու ազատությունների համապատասխան երաշխիքներ ստեղծելու, այլ սոսկ իրենց իշխանությունը պահպանելու նպատակով: Իհարկե, այդպիսի հայտարարությունները ընդամենը անամոթ ապատեղեկատվություն էին, ինչը, ցավոք, կարող էր պարզվել միայն հետագայում, բարեփոխված Սահմանադրությունն ուժի մեջ մտնելուց հետո: 2015 թվականի դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ հանրաքվե, և ժողովուրդը «այո» ասաց սահմանադրական բարեփոխումներին:

Հարկ է նշել, որ բարեփոխված Սահմանադրությունը, ըստ էության, Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրություն էր: Բավական է ասել, որ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն ուներ 220 հոդված՝ մինչ այդ գործող Սահմանադրության 117 հոդվածի փոխարեն, այսինքն՝ բարեփոխված Սահմանադրությունը շուրջ երկու անգամ շատ հոդվածներ է պարունակում, քան նախորդը: Եվ, ի թիվս այլնի, ամենակարևորը՝ **երկիրը կառավարման կիսանախագահական ձևից անցում էր կատարել խորհրդարանական կառավարման ձևի:**

Նոր սահմանադրությունն ստեղծում է Հայաստանում զարգացած պառլամենտարիզմի հաստատման համար անհրաժեշտ և բավարար բոլոր սահմանադրական-իրավական հիմքերը: Հիմնովին փոփոխվում են պետական իշխանության մարմինների փոխհարաբերությունների բնույթը, բարձրանում է Ազգային ժողովի դերն ինչպես օրենսդրական գործունեության ոլորտում, այնպես էլ վերահսկողություն իրականացնելիս և պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում: Նոր սահմանադրությունը ստեղծում է նաև խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գոր-

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2014 թ.:

ծունեության կառուցակարգեր, ամրագրում է գործադիր իշխանության սահմանադրական հիմքերը, ստեղծում է դատական մարմինների անկախության երաշխիքներ: Նոր սահմանադրությունը ճշտում է Հանրապետության նախագահի դերը քաղաքական համակարգում: Հանրապետության նախագահի հիմնական գործառույթն է դառնում պետական իշխանության մարմինների կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելը, իսկ նրա մյուս գործառույթները դառնում են արարողակարգային և խորհրդանշական բնույթի:

Նոր Սահմանադրությունը փոփոխում է Հայաստանի պետական կառավարման ձևը, երկիրը կառավարման կիսանախագահական համակարգից անցում է կատարում խորհրդարանական կառավարման համակարգի: Նոր Սահմանադրության համաձայն՝ Հայաստանում գործադիր իշխանությունն իրականացնում է միայն կառավարությունը՝ Ազգային ժողովի վերահսկողության ներքո, ընդ որում, վարչապետ է նշանակվում խորհրդարանական մեծամասնության թեկնածուն:

Նոր Սահմանադրությունն էապես փոխում է Ազգային ժողովի դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում և պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում, ընդլայնում է նրա վերահսկողական լիազորությունները և ամրագրում նրա արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ երաշխիքներ:

Նոր Սահմանադրությունը հստակ ամրագրում է Ազգային ժողովի կարգավիճակը և գործառույթները: **Սահմանում է, որ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է** (հոդված 88, մաս 1): Ի դեպ, այսպիսի դրույթ առաջին անգամ է ամրագրվում Սահմանադրությամբ: Հարկ է նշել, որ ներկայացուցչությունը պառլամենտարիզմի հիմքն է և հիմնական բնորոշ գծերից մեկը: Առանց ներկայացուցչության չի կարող լինել պառլամենտարիզմ:

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթն ապահովվում է ժողովրդական ընտրական համակարգի միջոցով: Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթը երաշխավորվում է կուսակցությունների՝ ընտրողների շահերի և կամքի արտահայտման այդ միջոցների ազատ գործունեությամբ:

Խոսելով Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթի մասին՝ հարկ է նշել նաև, որ Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնություններն Ազգային ժողովում նույնպես ունեն իրենց ներկայացուցչությունը: Սահմանադրության համաձայն՝ Ազգային ժողովում ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին (հոդված 89, մաս 2):

Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթի հետ սերտորեն կապված է այն հարցը, թե ում է ներկայացնում պատգամավորը: Այդ հարցի պատասխանը պայմանավորված է ներկայացուցչության այն կոնցեպցիայի բնույթով, որն ընկած է պառլամենտական ներկայացուցչության հիմքում: Պատգա-

մավորը կարող է ներկայացնել միայն կոնկրետ ընտրատարածքի ընտրողների շահերը (**հրամայական մանդատ**), ողջ ժողովրդի շահերը (**ազատ մանդատ**), կոնկրետ կուսակցության շահերը (**կուսակցական մանդատ**): Հայաստանում պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, այսինքն՝ նա օժտված է ազատ մանդատով: Սահմանադրությունում ամրագրված է, որ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով (հոդված 94):

Հայաստանում պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կազմավորման, ինչպես նաև նրանց հարաբերությունների սահմանադրական-իրավական վերլուծությունները ցույց են տալիս, որ Հայաստանում պետք է հաստատվի զարգացած պառլամենտարիզմ: Սահմանադրության համաձայն Հայաստանը պետք է լինի ներկայացուցչական պետություն, որտեղ պետական մարմինները և պաշտոնատար անձինք կաշկանդված են Սահմանադրությամբ և օրենքներով, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները բաժանված են և հավասարակշռված, իսկ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի վարած ներքին և արտաքին քաղաքականությունը պետք է համապատասխանի բարձրագույն ներկայացուցչական օրենսդիր մարմնում մեծամասնություն կազմող քաղաքական ուժի կամքին:

Սահմանադրությունն ամրագրում է զարգացած պառլամենտարիզմի բազմաթիվ դրույթներ: Նախ՝ Սահմանադրության համաձայն Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինը պառլամենտն է՝ Ազգային ժողովը, որը ժողովրդական ներկայացուցչության և ժողովրդի շահերի ինստիտուցիոնալ պետական մարմին է: Սկզբունքորեն Ազգային ժողովը պետք է լինի ժողովրդաիշխանությունը պետական իշխանության հետ միավորող օղակ: Ազգային ժողովի ընտրությունները պետք է անցկացվեն ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

Այնուհետև, Սահմանադրությունը նախատեսում է, որ Ազգային ժողովը պետք է լինի ժողովրդավարական եղանակով կազմավորված այնպիսի լեգիտիմ ներկայացուցչական մարմին, որը պետք է իրականացնի ոչ միայն օրենսդրական, այլև վերահսկողական գործառույթներ: Սահմանադրության համաձայն Ազգային ժողովը մի կողմից պետք է լինի Հայաստանի ներքին և արտաքին քաղաքականության նորմատիվ իրավական ապահովման և գործնական իրականացման, մյուս կողմից՝ պետական իշխանության այլ մարմինները ձևավորող և նրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնող բարձրագույն մարմին: Դա նշանակում է, որ Սահմանադրության համաձայն Ազգային ժողովը պետք է արտոնյալ դիրք ունենա պետական իշխանության մարմինների համակարգում:

Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանում իշխանությունների բաժանումը և հավասարակշռությունը, նախատեսում է զսպումների և հակակշիռների մի շարք կառուցակարգեր: Սահմանադրությունը նախատեսում է նաև մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև իրավունքի գերակայությունն ապահովելու իրական հնարավորություններ: Բացի այդ, Սահմանադրությունն ամրագրում է պառլամենտարիզմի այնպիսի մի կարևոր բաղադրիչ, ինչպիսին է բազմակուսակցությունը և գաղափարախոսական բազմակարծությունը, ինչն իրական հնարավորություններ է ստեղծում հասարակության բոլոր շերտերի և խավերի շահերի գործնական իրացման համար, այսինքն՝ ունի պրագմատիկ նշանակություն:

Այսպիսով, Սահմանադրությունն ամրագրում է Հայաստանում պետական իշխանության կազմակերպման այնպիսի ձև, որի հիմքում ընկած են իշխանությունների բաժանման և հավասարակշռման, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների ապահովման, բազմակուսակցության և գաղափարախոսական բազմակարծության սկզբունքները, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ համընդհանուր և ազատ ընտրություններով ձևավորված Ազգային ժողովի արտոնյալ դիրքը:

Եվ այսպես՝ Սահմանադրությունը նախատեսում է Հայաստանում հաստատել զարգացած պառլամենտարիզմ, որի համար անհրաժեշտ է միայն գործնականում անշեղորեն կիրառել սահմանադրական-իրավական սկզբունքները և նորմերը: Սակայն, մեր կարծիքով, Հայաստանում այդ սկզբունքների և նորմերի կիրառմանը խոչընդոտում են հասարակական-քաղաքական երկու իրողություն: Առաջին՝ Հայաստանում դեռ չեն ձևավորվել քաղաքական կուսակցություններ, որոնք կկարողանային լիարժեք ներկայացնել հասարակության բոլոր շերտերի և խավերի շահերը: Միակ բացառությունն է, թերևս, ՀՅԴ-ն: Եվ երկրորդ՝ Հայաստանում քաղաքական մշակույթը դեռևս բավական ցածր մակարդակ ունի, մասնավորապես ընտրողները չեն խորշում իրենց քվեները առ և՛ վաճառքի առարկա դարձնելուց: Այս իրողությունները կարող են խաչ քաշել Ազգային ժողովի ներկայացուցչական բնույթի վրա: Ցավոք, Սահմանադրությունը ընդունելուց և ուժի մեջ մտնելուց հետո այս երկյուղներն իրականություն դարձան:

2017 թվականի ապրիլին պետք է անցկացվեին Ազգային ժողովի վեցերորդ գումարման ընտրությունները: Այդ ընտրություններից հետո պետք է ձևավորվեր այնպիսի Ազգային ժողով, որը բոլորովին նոր դեր պետք է ունենար Հայաստանի պետական և հասարակական-քաղաքական կյանքում: Այդ կապակցությամբ երկրի քաղաքական ուժերի առջև ծառացան լուրջ և դժվարին խնդիրներ: Հայաստանի Հանրապետական կուսակցությունն իր առջև խնդիր էր դրել պահպանել և վերարտադրել նվաճված պետական իշխանությունը, մյուս քաղաքական կուսակցությունները՝ իրենց տեղն ունենալ պետական իշխանության համակարգում:

Դժվարին քաղաքական իրավիճակում էր հայտնվել, հատկապես, Հայաստանի Հանրապետական կուսակցությունը: Իշխանությունը պահպանելու և վերարտադրվելու համար նա պետք է վերականգներ իր խարխված վստահությունը և շահեր ժողովրդի համակրանքը: Եվ ահա, 2016 թվականի սեպտեմբերի 13-ին ՀՀ-ն կատարում է առաջին քայլը՝ վարչապետ է նշանակում Երևանի նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանին: Վերջինս մի շարք միջոցառումներ է ձեռնարկում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու ուղղությամբ: Մի կարճ ժամանակ երկրի տնտեսությունն աշխուժանում է, և ժողովրդի մեջ կրկին ինչ-որ հույսեր են արթնանում:

Վարչապետ Կարեն Կարապետյանը 2016 թվականին անդամագրվում է ՀՀ-ին և անմիջապես տեղ զբաղեցնում կուսակցության գործադիր մարմնում, իսկ 2017 թվականի հունվարին ընտրվում է կուսակցության նախագահի առաջին տեղակալ: Ակնհայտ է, որ նա այդ ժամանակ արդեն նվիրված է եղել Ազգի և Հայրենիքի հավիտենության գաղափարներին, որոնք դավանում էր Հայաստանի Հանրապետական կուսակցությունը և խորությամբ ուսումնասիրել է Գարեգին Նժդեհի ուսմունքը:

Նախքան Ազգային ժողովի ընտրությունները՝ Հանրապետության նախագահը, ով նաև ՀՀ նախագահն էր, մի քանի անգամ հրապարակավ հայտարարում է, որ իր պաշտոնավարության ժամկետը լրանալուց հետո չի զբաղեցնելու Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի պաշտոնները: Վարչապետն իր հերթին տարբեր առիթներով հայտարարում է, որ եթե ՀՀ-ն Ազգային ժողովում մեծամասնություն կազմի, ինքը կզբաղեցնի վարչապետի պաշտոնը: Հայաստանի ժողովրդի մի մասը հավատում է այդ խոստումներին:

2017 թվականի ապրիլի 2-ին նշանակվում են վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները: Ազգային ժողովի ընտրություններին մասնակցում էին չորս դաշինք և հինգ կուսակցություններ:

Շուտով լուրեր տարածվեցին նախընտրական քարոզչության փուլում ընտրական օրենսդրության խախտումների մասին: Մասնավորապես, մամուլը տեղեկություններ հաղորդեց Հայաստանի Հանրապետական կուսակցության կողմից վարչական ռեսուրսը օգտագործելու մասին:

Աստիճանաբար ընտրակաշառքը դառնում էր զանգվածային, բաժանվող գումարները մեծանում էին: Եվ ահա, 2017 թվականի մարտի 31-ին Ազգային ժողովի փոխնախագահը, ՀՀ գործադիր մարմնի անդամներից մեկը, ով նաև ՀՀ կանանց խորհրդի նախագահն էր, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, որտեղ տեղի էր ունենում ՀՀ նախընտրական քարոզչության ամփոփումը, պատասխանելով լրագրողների հարցերին, հայտարարեց, թե ընտրակաշառքը բարեգործություն է... Նա տառացիորեն ասաց հետևյալը. «Լինեն հանրապետականները, կամ մեկ այլ կուսակցության ներկայացուցիչները, բարձրաձայնում եմ և խնդրում եմ, որ

տարածք, հասցրեք մեր հանրությանը, որ ով այսօր ցանկություն ունի ընտրակաշառք բաժանելու, նա անում է բարեգործություն: Ուրեմն, նա մի մարդ է, ով պարզապես զբաղված է նվիրատվությամբ, պարզապես նվերներ է տալիս, առանց որևէ հույս ունենալու, որ այդ կերպ կգնի քվե... ընտրակաշառք բաժանելը ուղղակի նվիրատվություն է»: Այնուհետև ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, ՀՀԿ կանանց խորհրդի նախագահին ավելացնում է. «Ով որ ուզում է ընտրակաշառք տալ, թող տա, ով որ ուզում է ընտրակաշառք վերցնել, թող վերցնի ու թող գնա ընտրի այնպես, ինչպես իր կամքն է թելադրում»¹: Հանճարե՛ղ է:

Ազգային ժողովի ընտրություններից յոթ ամիս անց ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հրապարակեց իր վերջնական գեկույցը, որտեղ, մասնավորապես, ասվում է, որ իշխանությունը և քաղաքական ուժերը պետք է միջոցներ ձեռնարկեն ընտրության նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու ուղղությամբ: Վերջնական գեկույցում շեշտվում է նաև, որ պետք է դատապարտելի դարձնել քվեների առք ու վաճառքը և բացառել ընտրական միջոցառումներին մասնակցելու և քվեարկելու հարցերում այս կամ այն կերպ ճնշումներ գործադրելու դեպքերը²:

Ինչպիսի՞ պառլամենտարիզմ է ներկայումս Հայաստանում, զարգացա՞ծ, թե՞ իմիտացիոն պառլամենտարիզմ: Այդ հարցին կարելի է ճշգրիտ պատասխանել տարիներ անց, երբ ուսումնասիրվեն սահմանադրական սկզբունքների և նորմերի երկարատև գործնական կիրառման արդյունքները, ասենք՝ 2050 թվականին:

Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ

1. 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ Սահմանադրություն:
2. 2005 թ. նոյեմբերի 27-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն:
3. 2015 թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրություն:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2014 թ.:
5. Հայոց պատմություն: Խմբագրությամբ՝ պրոֆ. Հր. Սիմոնյանի, Երևան, 2002:
6. <https://news.am/arm/news/381992.html>
7. www.armradio.am/hy/2017/12/04eshk-jhmig/ 18:03, 04.12.2017:

¹ <https://news.am/arm/news/381992.html>

² www.armradio.am/hy/2017/12/04eshk-jhmig/: 18:03, 04.12.2017.

ЭТАПЫ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ПАРЛАМЕНТАРИЗМА

Аннотация

Обращаясь и прослеживая этапы становления и развития современного армянского парламентаризма, автор статьи считает, что становление парламентаризма в Армении началось с провозглашения независимости в 1990 году с принятием Декларации от 23 августа.

Соответственно автор выделил три основных этапа становления и развития современного армянского парламентаризма. **Первый этап** – этап становления парламентаризма в Армении, включающий период с 23 августа 1990 года по 5 июля 1995 года. Этот этап, по мнению автора, начинается с принятия Декларации о независимости Армении и завершается принятием Конституции Армении.

Второй этап становления и развития парламентаризма в Армении охватывает период от принятия Конституции до внесения в нее изменений, то есть период с 5 июля 1995 года по декабрь 2005 года. Этот этап, по мнению автора статьи, можно назвать периодом утверждения парламентаризма в Армении.

Третий этап становления и развития парламентаризма в Армении охватывает период от внесения конституционных поправок до принятия новой Конституции, то есть период с 2005 по 2015 годы. Этот этап, по мнению автора статьи, можно назвать периодом дальнейшего развития парламентаризма в Армении.

Ключевые слова: Декларация, Конституция, Верховный Совет, Президент Республики Армения, Конституционный Суд, парламентаризм, законодательная, исполнительная, судебная, парламентская форма государственного правления, верховенство права, представительный орган, политический кризис.

1(118)2025

◆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

STAGES OF FORMATION AND DEVELOPMENT OF MODERN ARMENIAN PARLIAMENTARISM

Annotation

Addressing the stages of formation and development of modern Armenian parliamentarism, the author of the article believes that the formation of parliamentarism in Armenia began with the adoption of the Declaration on the Independence of Armenia dated August 23, 1990.

Accordingly, the author identified three main stages of formation and development of modern Armenian parliamentarism. **The first stage** is the formation of parliamentarism in Armenia, including the period from August 23, 1990, to July 5, 1995. According to the author, this stage begins with the adoption of the Declaration on the Independence of Armenia and ends with the adoption of the Constitution of Armenia.

The second stage of formation and development of parliamentarism in Armenia covers the period from the adoption of the Constitution to the amendments thereto, that is, the period from July 5, 1995, to December 2005. According to the author of the article, this stage can be called the period of establishment of parliamentarism in Armenia.

The third stage of formation and development of parliamentarism in Armenia covers the period from the introduction of constitutional amendments to the adoption of the new edition of the Constitution, that is, the period from 2005 to 2015. According to the author of the article, this stage can be called the period of further development of parliamentarism in Armenia.

Keywords: Declaration, Constitution, Supreme Council, President of the Republic of Armenia, Constitutional Court, parliamentarism, legislative, executive, judicial, parliamentary form of government, rule of law, representative body, political crisis.

Հոդվածը հանձնված է խմբագրություն 09.01.2025 թ., տրվել է գրախոսության 12.01.2025 թ., ընդունվել է տպագրության 01.02.2025 թ.: